

– Կա՛ց, Խուրեն եղբայր, ես հրամայեցի տղուն, որ ինձ ընկերանայ,– ըսաւ Գուրգէն, եւ թեւէն բռնելով նա էլ իւր միւս քովը նստեցուց:

Գուրգէն ինքն էլ կը գարմանար թէ ինչպէ՞ս կերակուր կ'ուտեր, այնպիսի յուզմունքէ մը վերջ, բայց այդ գորաւոր կազմուածքը այդ տաժանելի ճամփորդութենէն ետքը, սիւթական սնունդի պէտք ուներ, եւ իւրաքանչիւր հացի պատառին կը մտածեր թէ երբ մինակ մնար բոլոր գիշերը եւ յետագայ գալիք գիշերներն՝ բաւական էին իւր սրտի վերքին հետ զբաղելու: Բայց կերակուրը իր համն ու զուարճութիւնը կորուսեր էր իրեն համար, ուստի շուտ մը կշտացաւ եւ ելաւ սեղանէն եւ երբ լուացուեցաւ, հարցուց թէ՛

– Արծրունիք կ'ուզայի՞ն երբեմն այս իրենց նոր կալուածի սւյցելութեան:

– Օրիորդին երթալէն վերջ գրեթէ չորս ամիս կը լինի եւ դեռ ոչ ոք չերեւցաւ. ինձ յանձնեցին բերդին բոլոր կառավարութիւնը, ինձ տուին բոլոր բանլիքները եւ ահա առաջին անգամս է, որ աս դահլիճին դուռը բացուեցաւ եւ սա վառարանը միաց:

– Ուրեմն անկողնոյ սենեակնե՞րն էլ քեզ յանձնուած են, Խուրեն եղբայր:

– Դու քուն ունիս, իշխան, եւ իրաւունք էլ ունիս,– ըսաւ Խուրեն, եւ շուտ մը բանլիքներու տրցակ մը հանեց եւ ուղղեցաւ դէպի հիւրի սենեակներն:

– Խուրեն եղբայր,– ըսաւ իշխանը,– դու գիտես թէ երբ ես տղայ էի, այս Ռշտունեաց տան մէջ տարիներով բնակեցայ եւ իմ սենեակս ունէի, միթէ կարելի չէ, նոյն սենեակը աս գիշերն անցընեմ:

– Ինչպէս որ կամենաս, իշխան, միայն այն քու սենեակը քու երթալէդ քիչ վերջը Օրիորդը իրեն սենեակ ըրած էր, եւ մենք այն օրէն մինչեւ հիմա սրտերնիս վիրաւոր չի կրցանք մաքրել ու շտկել: